ՐԱՖՖԻ

Բրուտի շունը

Աղմուկ ու շփոթ հանկարծ բարձրացավ,
Գոչյուն ու հաչյուն լրսվեց, սաստկացավ,
«Գա՛յլը, հա՛ գայլը»… աղաղակեցին,
Գյուղի շները վրա վազեցին:

Գայլը հենց լսեց, իսկույն ետ դարձավ,
Արագ քայլերով գյուղից հեռացավ:
Շները կատաղած՝ դեռ հաչում էին,
Հետևից ընկած՝ հալածում էին:

Հալածում էին՝ երկար ու երկար,
(Նրանց կրքերին՝ չափ, սահման չը կար)
Մինչև ամենքը իսպառ հոգնեցան,
Կես ճանապարհից մեկ-մեկ ետ դարձան:

Մեկը չը դարձավ: Նիհար, քոսոտած,
Բուրդն ու մազը՝ վրայից թափված,
Նեխած բերանը փչում էր փչում
Մի խիստ զզվելի գարշահոտություն:

Գա՛մփռ էր երբեմն, գա՛մփռ ահագին,
Կարծվում էր պետը՝ նա շանց-ոհմակին,
Իսկ այժմ քաղցից, հարաժամ քաղցից,
Ցամաքած փորը կպել էր մեջքին:

Գայլը կանգ առեց, խեթ կերպով նայեց.
Դու ո՞ւմ շունն ես, նրան հարցրեց:
Բրուտի շունն եմ, ասաց քոսոտը,
Եվ վստահությամբ առաջ դրեց ոտը:

Կըժեր, սափորներ՝ միշտ շինում է նա,
Յուր նման վարպետ աշխարհում չը կա,
Այդ ամաններով՝ ջուրը աղբյուրից
Բերեն գյուղացիք, այրըված ծարավից:

Տո՛, գոչեց գայլը, անպիտա՛ն քավթառ,
Ասա՛, դու ի՞նչ ոխ, ի՞նչ վրեժ ու պատճառ
Ունեիր այսպես՝ ինձ հալածելու,
Եվ մինչև այստեղ՝ հետևիցս գալու:

Այն մյուս շները, որ հալածեցին,
Այնքան ոռնացին, այնքան գոռացին,
Թերևս ունեին որևէ պատճառ,
Նրանց զայրույթը՝ վիշտ չէ ինձ համար:

Հափշտակել եմ մեկի գառնիկը,
Կամ փողոտել եմ՝ մյուսի հորթիկը,
Իսկ քո բրուտի խեցին ու սախսին
Խո ես չեմ կերել, գարշելի՛ չնչին:

Մոնչաց գայլը, զայրացած աչեր
Փայլատակեցին կրակ ու կայծեր,
Ձգեց ոտքերի տակը քոսոտին,
Վերջ տվեց իսկույն թըշվառի կյանքին: